ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի օգոստոսի 20-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ — *Գ. Գաբրիելյանի*, *Կ.Գրիգորյանի*, *Ա.Ղուկասյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար — *Վ.Վարդազարյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ — *Ա.Հովհաննիսյանի*

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. *ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:*

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1. ՀՀ Արմավիրի մարզպետարանի ենթակայության ՊՈԱԿ-ների,ՊՓԲ և ՓԲ ընկերությունների կողմից կատարվող գնումների գործընթացում գնագոյացմանը ֆինանսական և իրավական արդյունավետ կարգավորում տալու անհրաժեշտության վերաբերյալ :

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին՝

աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության և իրավաբանական բաժնի հետ համատեղ ուսումնասիրել մարզպետարանի ենթակայությամբ գործող վերը նշված կազմակերպությունների կողմից կատարվող գնումների գործընթացում գնագոյացմանը ֆինանսական և իրավական արդյունավետ կարգավորում տալու օրենսդրական դաշտի ընձեռած հնարավորությունները և համապատասխան առաջարկություն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 27.08.2018թ./

Հարց 2. *ՀՀ Արմավիրի մարզային նշանակության ճանապարհների փոսային վերանորոգումների իրականացման նպատակով կատարվող գնումների գործընթացում գնագոյացմանը ֆինանսական և իրավական արդյունավետ կարգավորում տալու անհրաժեշտության վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնական Ա.Բիչախչյանին և աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Ա. Հովհաննիսյանին՝

Արմավիրի մարզային նշանակության ճանապարհների փոսային վերանորոգումների իրականացման նպատակով կատարվող գնումների գործընթացում գնագոյացմանը ֆինանսական և իրավական արդյունավետ կարգավորումն ապահովելու համար ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ մարզային նշանակության ճանապարհները սպասարկող ճանապարհաշինարարական կազմակերպությունների ղեկավարների հետ կազմակերպել հանդիպում:

/Ժամկետ՝ 27.08.2018թ./

Հարց 3. *ՀՀ Արմավիրի մարզում 2018թ. օգոստոսի 10-ին ուժեղ քամու ուղեկցությամբ տեղացած աղետալի կարկտահարության հետևանքով տուժած ընդհանուր թվով 19 համայնքների գյուղացիական տնտեսությունների կողմից վարկային պարտավորությունների կատարման գործընթացին հնարավոր աջակցություն ցուցաբերելու միջոցառումների վերաբերյալ:*

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Հովհաննիսյանին՝

ՀՀ Արմավիրի մարզում 2018թ. օգոստոսի 10-ին ուժեղ քամու ուղեկցությամբ տեղացած աղետալի կարկտահարության հետևանքով տուժած ընդհանուր թվով 19 համայնքների գյուղացիական տնտեսությունների կողմից վարկային պարտավորությունների կատարման գործընթացին հնարավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով պատրաստել համապատասխան շրջաբերական գրություններ ուղղված մարզում գործող բանկային և վարկային կազմակերպությունների, մարզի համայնքների ղեկավարներին և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 27.08.2018թ./

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում առկա խնդիրներն ուսումնասիրելու նպատակով այցելություններ կատարելու վերաբերյալ:
Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ա. Ղուկասյանին՝

ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում առկա խնդիրներն ուսումնասիրելու նպատակով պատրաստել այցելությունների համապատասխան ժամանակացույց և ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետի հաստատմանը:

/Ժամկետ՝ 20.08.2018թ./

Հարց 5. Մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվող մոնիթորինգի ընթացքի և արդյունքների մասին ընդհանուր տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ;

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին և աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ս.Բուդաղյանին՝

Մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացվող մոնիթորինգի ընթացքի և արդյունքների մասին ընդհանուր տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

/Ժամկետ՝ 27.08.2018թ./

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 23.08.2018 19:27:45 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

ՄԱՐԶՊԵՏ՝
Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արձ.՝
Դ.Դավթյան